թեանը եռանդով և աշխատութեամբ շարունակել իրանց գործը, ասելով, որ միջոցներն իրանք իրանց կը գան, երբ Թիֆլիսի հայ հասարակութիւնը իրաք կը համոզուի Ընկերութեան կատարած սուրբ գործի կարևորութեան մէջ։

Այն այցելութեան միջոցին Ընկերութեան Վարչութեան ատենապետուհի Իշխանուհի Բէհբութեանը այդ օրը իմանալով, որ Նորին Օծութիւնը, նախընթաց, այն է կիրակէ օրը նշանակած է եղել ընդունելու իւր մօտ Վարչութեան անդամներին, որդիական ներողութիւն խնդրեց, որ թիւրիմացութեամբ զրկուել են նոքա այդ բաղդից։ Վեհափառ Տէրը ժպտալով պատասխանեց Իշխանուհուն հետևեալը. «Ես, ի հարկէ, ներում են ձեզ, որ դուք չեկաք Ինձ մօտ, բայց Ինձ դուք չէիք ներիլ, եթէ ես չը գայի ձեզ մօտ»։

Վեհափառ Հայրապետի այցելութեան միջոցին ուսումնարանների շուրջը խռնուած էին բազմաթիւ արք և կանայք, որոնք անհամբեր փափագում էին Նորին Սրբութեան Աջն համբուրել և օրհնութիւնը վայելել։ Ամենքն էլ արժանացան իրանց բաղձանքին։

Միաբան Ս. Աստուածածնի եկեղեցւոյ Մեղրեցւոց Շուշի քաղաքի Բարեկ. Մինաս Քահանայ Մինաս Վարդապետեանց սկսած 1885 թուից ամ ըստ ամէ նուիրած է յօգուտ Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի և յանուն վանիցն սրբոց Յակոբեանց Երուսաղէմի հինգ հինգ ռուբլի, խոստանալով շարունակել զայն ցմահ իւր, որին Աստուած վարձահատոյց եղիցի։

ՊԱՏՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱՆՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Սեպտեմբերի 19 ին Ս. Սինոդն պատուիրեց Երևանայ Հայոց Կոնսիստորիային արձակել Մրենոյ վանուց վանահայրութեան պաշտօնից տիրացու Յակոբն Ղազանչեանց իւր անընդունակութեան և անհոգ ծառայութեան համար և նորա տեղն նշանակել վանահայր Խծկոնի վանուց Յակոբ Վարդապետն։

---

22 Օգոստ. Ս. Սինոդն հիմնուելով Երևանայ Վիճակային Կոնսիստորիայի յայտարարութեան վերայ համար 2544, հրամայեց թոյլ տալ Նախիջևանի Ս. Երրորդութեան եկեղեցին վերանորոգել իւր ունեցած 1200 ռուբ. եկեղեցական դրամովն, իսկ պակասորդն լրացնել հանգանակութեամբ տեղական ժողովրդոց, որի համար ընտրել շինութեան հոգաբարձուներ և տալ նորանց ժապաւինեալ տօմար։

—

29 օգոստ. Ս. Սինոդն հիմնուելով Երևանի Թեմական փոխանորդ Գեր. Սուքիաս Եպիսկոպոսի յայտարարութեան վերայ համ. 647՝ ենթարկեց զՄեսրովբ քահանայն Գետաթաղ գեղջ Տաթևու վիճակին չորս ամսեայ ապաշխարանաց առ դրան եկեղեցւոյն՝ իւր անարժան վարմանց համար եկեղեցւոյ Ս. սպասուց հետ, և անհոգութեանց իւր քահանայական կոչման մէջ։

—

29 օգոստ. Ս, Սինոդն հիմնուելով Վրաստանի և Իմէրէթի հայոց վիճակային Կոնսիստորիայի յայտարարութեան վերայ համ. 3236, թոյլատրեց նմին ենթարկել երկամեայ եկեղեցական ապաշխարանաց Ախալցխոյ Յովհան քահանայն Յարոյեանց նորա ծննդական իարդախ վկայական տալուն համար։

—

31 օգոստ. Ս. Սինոդն վեցամսեայ ապաշխարանաց ենթարկեց առ դրան եկեղեցւոյն, Աշտարակայ Գրիգոր քահանայն Տ. Գրիգորեանց, որ պսակ դրած է անչափահաս Առաքել Կարապետեանին ընդ օրիորդ Հռիփսիմէի Անտոնեանց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ.

Տփխիսում մամուլի տակից դուրս եկան և վաճառվում են Կենդր. գրավաճառանոցում Սահակ Քահ. Սահակեանի աշխատասիրած Ս. Պատմութիւն, հին ուխտի, (աշակերտների և աշակերտուհիների համար) որի գինն է 30 կոպ. և Դասագիրք Կրօնի (ուղեցոյց հայ կրօնասոյցների համար 14 պատ-